ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ.Գեղասար, 077799399, geghasar.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 փետրվարի 2020թվականի N 4-Ա

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 21.02.2020ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով Գեղասար համայանքի ավագանին, որոշում է .

Հաստատել Գեղասար համայնքի 21.02.2020թվականի 2-րդ հերթական նիստի օրակարգը.

1. Գեղասար համայնքի 2020թվականի բյուջեի կատարման տարեկան և զարգացման ծրագրի իրականացման հաշվետվություններին մասին:

2. ՀՀ Լոռու մարզի Գեղասարի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

3.Գեղասար համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

4. Գեղասար համայնքի 2020թվականի տարեկան աշխատանքային պլանի մասին:

5.Գեղասար համայնքի ավագանու հաջորդ հերթական նիստի օրը որոշելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՄԿՐՏՉՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՆՆԱ

ՍԻՄՈՆՅԱՆ ՎՈՒԵԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ.Գեղասար, 077799399, geghasar.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 փետրվարի 2020թվականի N 5-Ն

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապեության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Գեղասար համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Գեղասար համայնքի 2019թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Հաստատել 2019թվականի Գեղասար համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՄԿՐՏՉՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՆՆԱ

ՍԻՄՈՆՅԱՆ ՎՐԵԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
Գեղասար համայնքի ավագանու
2020թվականի փետրվարի 21-ի, թիվ 5-Ն որոշումից

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնքի ավագանու հինգ անդամներից չորսը, Գեղասար համայնքի միջնակարգ դպրոցի տնօրեն՝ Վազգեն Ղուկասյանը և համայնքի մի շարք բնակիչներ:

Գեղասար համայնքի ղեկավար՝ Վարազդատ Գրիգորյանը ներկայացրեց 2019 թվականի ընթացքում Գեղասարի համայնքապետարանի կողմից կատարված աշխատանքների, ձեռքբերումների և գալիք տարվա նախատեսված ծրագրերի մասին:

Գեղասարի համայնքապետարանը հաշվետու ժամանակաշրջանում կատարել է իր առջև դրված պարտականությունների մի մասը :

2019թվականին կատարել է եկամուտներ՝ նախատեսված՝ 28.986.960դրամի փոխարեն, փաստացի կատարվել է 29.656.610դրամի, 108%-ով: 2019թվականին բերքատվությունը կազմել է՝

Կարտոֆիլ - 1500g, հացահատիկ - 1530g, բանջարեղեն - 500g, բնական խոտ - 3500g, ծղոտ - 1500g:

Համայնքի ղեկավարը նշեց նաև Գեղասար համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման 2019-2023թթ հնգամյա ծրագրով նախատեսված հետագա անելիքների հրատապ խնդիրների և իրականացված աշխատանքների մասին:

1.Համայնքի սոցիալ – տնտեսական վիճակի բարելավում

ա).Դրամական օգնություն է ցուցաբերվել Գեղասար համայնքի նորածին երեխա ունեցող 15 ընտանիքներին 150.000դրամ գումարով և սոցիալապես անապահով 7 ընտանիքներին 180.000դրամ գումարով:

բ). Աշխատանքներ են տարվել գյուղատնտեսության և անասնապահության զարգացման համար:

գ)Ոռոգման սեզոնին ժամանակին կազմակերպվել է ոռոգման աշխատանքները:

Համայնքի ղեկավարի հսկողությամբ կատարվել է անասունների ճիշտ և ժամանակին նախատեսված պատվաստումներ, համաճարակի տարածումը կանխելու նպատակով:

դ) Հանդամասերում տեղադրվել է անասունների համար խմոցներ:

ե). Համայնքի հողի սնուցման համար բնակիչներին 6900դրամ արժողությամբ ապահովվել է ազոտական պարարտանյութերով, գարնանացանի աշխատանքները պատշաճ կատարելու համար ցանկացողներին տրամադրվել է գարու, կորնգանի, առվույտի սերմնացուներ մատչելի գներով: Անվճար կարգով տրվել է վնասատուներից և կրծողներից ազատվելու մկնդեղ:

2. Համայնքի սոցիալ – կենցաղային պայմանների բարելավում.

ա) Աշխատանքներ են տարվել համայնքը խմելու ջրով ապահովելու ուղղությամբ: Ինչպես ամեն տարի այնպես էլ այս տարի խմելու ջրի խնդիրը եղել է առաջնային տեղում, որի համար 2019թվականին նախապես նախատեսված է եղել Գեղասար համայնքի ջրամատակարարման համակարգի և կապտաժների հիմնանորոգման աշխատանքների կազմակերպում : Որը իրականացվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի /ՀՏԶՀ/ և համայնքի բյուջեի կողմից կատարված ներդրումների հիման վրա, որի շնորհիվ համայնքի բնակիչները լիարժեք ապահովվել են խմելու ջրով:

բ) Համայնքը գազաֆիկացված է մասամբ, սակայն աշխատանքներ են տարվում լրիվ գազաֆիկացնելու ուղղությամբ:

գ) Գյուղամիջյան ճանապարհները ձմռանը սիստեմատիկ մաքրվել են ձնածածկույթից: 2019թվականին համայնքի բյուջեի կողմից 500.000 դրամ գումար նախատեսվել և կատարվել է հանդամիջյան ճանապարհների վերանորոգման աշխատանքները, որի շնորհիվ համայնքի հանդամիջյան ճանապարհները դարձել են անցանելի, հարմարավետ տրանսպորտային միջոցների երթևեկության համար:

դ) Առանձնակի ուշադրություն է դարձվել համայնքի փողոցները լուսավոր, գեղեցիկ և բարեկարգ դարձնելու գործում: 2019թվականին նախապես նախատեսված համայնքի բյուջեից կատարվել է 1մլն դրամ գումարի ներդրում համայնքի փողոցների լուսավորության համակարգի ավելացման, կառուցման և վերակառուցման ընդլայնման, հենասյուների աշխատանքների իրականացման և վերահսկման ուղղությամբ ինչպես նաև ճանապարհներին տեղադրվել են տեսախցիկներ, գիշերային գողությունների կանխման համար: 2020թվականին սուբվեցիոն ծրագրով նախատեսված է ֆոտովոլտային արևային կայանի և արտաքին լուսավորության կառուցում:

3.Համայնքի կուլտուր- կենցաղային պայմանների բարելավում :

ա) Մեծ ուշադրություն է դարձվում երիտասարդների առօրյան հետաքրքիր դարձնելու համար, առանձնակի ուշադրություն է դարձվում

հիշատակի օրերի, տոնակատարությունների՝ կանանց տոնի, հաղթանակի օրվա, ամանորյա միջոցառումներ կազմակերպելու և նվերներ տրամադրելու գործում:

բ) <<Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում>> ծրագրի իրականացման առաջարկի և համայնքի բյուջեի կողմից կատարված ներդրումների շնորհիվ 2019թվականին Գեղասար համայնքը ունեցավ <<Ծիսակատարությունների և հանդիսությունների սրահ>> հաստատություն բարելավելով համայնքի բնակիչների կուլտուր-կենցաղային պայմանները և համայնքի մի խումբ բնակիչների համար ստեղծվեց ժամանակավոր աշխատատեղեր:

Գ) <<Վարձատրվող հասարակական աշխատանքների>> ծրագրով և համայնքի կողմից իրականացվեց <<Գեղասարի գերեզմանատան ցանկապատման և տարածքի բարեկարգման>> աշխատանքները: 2020թվականին <<Վարձատրվող հասարակական աշխատանքներ>> ծրագրով նախատեսված է Խաղահրապարակի կառուցում, <<Սուրբ Աստվածածին>> մատուռի բազրիկների կառուցում և տեղադրում, շրջապատի բարեկարգում և մատուռ տանող ճանապարհների հարթեցում:

4. Համայնքի կոմունալ-կենցաղային պայմանների բարելավում:

2019թվականի շաբաթօրյակների ժամանակ Գեղասար համայնքում իրականացվել է աղբահավաքման և սանիտարական մաքրման աշխատանքներ, համայնքի տարածքով մեկ տեղադրված են աղբամաններ, որը ամեն շաբաթ աղբատար մեքենայով տեղափոխվում է Սպիտակի աղբանոց: Գեղասարի համայնքապետարանի ուշադրության կենտրոնում է համայնքի սանիտարական մաքրման վիճակը բնակիչներին տեղեկացված է աղբահանությունը կատարել պարտադիր աղբամանների միջոցով, որի շնորհիվ ունենք մաքուր համայնք և չունենք աղբանոցներ :

Գեղասար համայնքի աղբահանության ծառայություն մատուցող բոլոր ընկերությունների հետ կնքված են պայմանագրեր:

<<Մաքուր Հայաստան>> ծրագրի շրջանակներում կատարվում է նախապատրաստական աշխատանքներ 2020թվականի մարտի 21-ին Գեղասար համայնքում համապետական շաբաթօրյակ անցկացնելու և շաբաթօրյակը արդյունավետ իրականացնելու նպատակով բացատրական աշխատանքներ են տարվել համայնքում գործող բոլոր համայնքային կազմակերպությունների, մասնավոր ընկերությունների և համայնքի բնակիչների հետ:

Միաժամանակ կարևորեց համայնքի գրանցված հաջողություններում մեր հայրենակիցներից ունեցած առանցքային ներդրումները և

օգտվելով առիթից իր երախտագիտությունը հայտնեց նրանց, արձանագրվելով այդ արդյունքները:

Այն աշխատանքները որոնք իր կողմից չի հասցվել կատարել 2019թվականին, նա խոստացավ այն իրագործել 2020թվականին:

Ավարտելով ելույթը համայնքի ղեկավարը նշեց, որ իր պարտքն է համարում, հաղթահարել և իրականացնել Գեղասար համայնքում ծագած բոլոր խնդիրները, պատրաստ է հայրենասիրությամբ պաշտպանել իր գյուղը, բարեկեցիկ դարձնել յուրաքանչյուր Գեղասարցու ապագան և օգտվելով առիթից շնորհակալություն հայտնեց իր համայնքի բնակիչներին, վստահության և համախմբվածության համար:

Իենց ելույթներով հանդես եկան նաև Գեղասար համայնքի միջնակարգ դպրոցի տնօրեն՝ Վ. Ղուկասյանը և ավագանու անդամ Վ.Սիմոնյանը:

Վ.Ղուկասյան - նշելով որ բարդ է համայնքի ղեկավարի աշխատանքը սակայն հաղթահարելով բոլոր դժվարությունները համայնքի ղեկավարը կարողանում է կարդալ համայնքի բնակիչների մտքերը և կարեկցել նրանց: Նրա հոգատարության և կատարած աշխատանքների շնորհիվ բնակիչները իրենց սատարված են զգում, նրա կողքին:

Վ.Սիմոնյանը - նշելով որ համայնքի ղեկավարը իր ընտրված ժամանակաշրջաններում կարողացել է բարեփոխել Գեղասար համայնքը , ստեղծելով բնակիչների համար բարենպաստ պայմաններ: Իր կատարած աշխատանքների շնորհիվ հասցրել է հարգված և սիրված լինել համայնքի բոլոր բնակիչների կողմից:

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գեղասար, 077799399, geghasar.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 փետրվարի 2020թվականի N 6-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի, 11-րդ, 28-րդ կետերով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Գեղասարի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Գեղասար համայնքի ղեկավարին համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին մեկ շաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

3. ՈՒԺը կորցրած ճանաչել Գեղասար համայնքի ավագանու 2020թվականի հունվարի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասարի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 3-Ա որոշումը:

4. Սույն որոշման 1-ին և 3-րդ կետերը ուժի մեջ են մտնում Գեղասարի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՄԿՐՏՉՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՆՆԱ

ՍԻՄՈՆՅԱՆ ԿՐԵԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Գեղասար համայնքի ավագանու

2020թվականի փետրվարի 21-ի, թիվ 6-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 7

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Ընդամենը ամսական
	Քաղաքական և հայեցողական պաշտոններ			
1	**Համայնքի ղեկավար**	**1**	**220000**	**220000**
2	**Համայնքի ղեկավարի տեղակալ**	**1**	**160000**	**160000**
	Ընդամենը	**2**	**380000**	**380000**
	Համայնքային ծառայության պաշտոններ			
3	Աշխատակազմի քարտուղար	1	160000	160000
4	Առաջատար մասնագետ	1	157000	157000
5	Առաջին կարգի մասնագետ	1	130000	130000
	Ընդամենը	**4**	**447000**	447000
	Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ			
6	Բանվոր խմելու ջրի կարգավորման	0.75	96000	72000
7	Հավաքարար	0.5	90000	45000
	Ընդամենը	**1.25**	**186000**	**117000**
ԸՆԴԱՄԵՆԸ		**6.25**	**1013000**	**944000**

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գեղասար, 077799399, geghasar.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 փետրվարի 2020թվականի N 7-Ա

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համայնքի ավագանու 2017թվականի մայիսի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 20-Ա որոշմանը համապատասխան , հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկվող հանձնաժողովի եզրակացությունները՝ Գեղասար համայնքի ավագանին որոշում է .

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի :

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՄԿՐՏՉՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՆՆԱ

ՍԻՄՈՆՅԱՆ ՎՐԵԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Գեղասար համայնքի ավագանու

2020 թվականի փետրվարի 21-ի **N 7-Ա որոշման**

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Յայլոյան Նարինե Ազատի – տաս հազար դրամ, երեխայի ծննդյան գումար,

2. Ֆիդանյան Լուսինե Եփրեմի – տաս հազար դրամ, երեխայի ծննդյան գումար,

3. Մկրտչյան Սարգիս Վոլոդյայի - երեսուն հազար դրամ, սոց. օգնություն:

ԳԵՂԱՍԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք
ՀՀ. Լոռու մարզ, գ.Գեղասար, 077799399, geghasar.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 փետրվարի 2020թվականի N 8-Ա

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության ներկայացրած համայնքների տարեկան աշխատանքային պլանների մշակման մեթոդական ուղեցույցը՝ համայնքի ավագանին որոշում է .

1. Հաստատել Գեղասար համայնքի 2020թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի :

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՄԿՐՏՉՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՆՆԱ

ՍԻՄՈՆՅԱՆ ՎՐԵԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ.Գեղասար, 077799399, geghasar.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 փետրվարի 2020թվականի N 9-Ա

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Գեղասար համայնքի ավագանին որոշում է.

1.Գեղասար համայնքի ավագնու հերթական նիստի օր նշանակել 2020թվականի ապրիլի 06-ը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՄԿՐՏՉՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՆՆԱ

ՍԻՄՈՆՅԱՆ ՎՐԵԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ